# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 2

## N ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ախ-9-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** << >> . 2025**թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զավեն Եղիազարյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 16.07.2025թ-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ախ-9-1 ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ախ-9-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| «ԳՆՈՐԴ» | «ՎԱՃԱՌՈՂ» |
|---|---|
| **ՀՀ ներքին գործերի նախարարություն** | **«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **ք. Երևան**,0038, **Աբելյան փող., 6/4 շենք,** TGA |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության** | **Բիզնես Կենտրոն 3-րդ հարկ, 310 սենյակ** |
| **գործառնական վարչություն** | **ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ** |
| **Հ/Հ** 900011049187 | **Հ/Հ** 220410515310000 |
| **ՀՎՀՀ** 02882913 | **ՀՎՀՀ** 08258677 |
| **հեռ. 010 59**-67-89 | **Հեռ**: +(374) 44 77 78 87 |
| **էլ. հասցեն՝** gnumner@mia.gov.am | **Էլ. Փոստ**: ardmoreconstruct@gmail.com |
| ______________ **Ա. Ֆիդանյան** | ——————— **Զ. Եղիազարյան** |
| **/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար/** | **/տնօրեն/** |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |
| FIDANYAN ARA 3108790099 — Digitally signed by FIDANYAN ARA 3108790099 Date: 2025.10.08 16:07:57 AMT | YEGHIAZARYAN ZAVEN 2202900969 — Digitally signed by YEGHIAZARYAN ZAVEN 2202900969 Date: 2025.10.07 17:22:20 AMT |